«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 60-1/03

ք. Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 28.07.2019թ. ժամը 17:30

Համաձայն «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 20.05.2020թ-ին ստացված, պարտապան՝ քաղաքացի Բենիամին Սահակյանի սնանկության գործով գնորդ Սարգիս Սերգեյի Դալլաքյանի դիմում-բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով ՝ քաղաքացի Բենիամին Սահակյանի սնանկության գործով կառավարիչ՝Վարդգես Բալաբեկյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում արծածված հանգամանքների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար՝ ս/թ Հունիսի 03-ին,17-00-ին հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստը չի կայացել և հետաձգվել է տեղափոխվելով այլ հերթի:

«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի ս/թ-ի Հուլիսի 28-ի հետաձգված նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝

Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմինե Մովսիսյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Աղամյանը
Դիմումատու – քաղաքացի Սարգիս Սերգեյի Դալլաքյանը
Քաղաքացի Բենիամին Սահակյանի սնանկության գործով կառավարիչ՝Վարդգես Բալաբեկյանը

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝

Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Աղամյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմինե Մովսիսյանը
Դիմումատու- քաղաքացի Սարգիս Սերգեյի Դալլաքյանը և սնանկության գործով կառավարիչ՝ Վարդգես Բալաբեկյանը պատշաճ ծանուցված էին նիստի տեղի և ժամի մասին,բայց անհայտ պատճառներով նիստին չեն ապահովվել իրենց կամ իրենց ներկայացուցիչների ներկայությունը:

ՕՐԱԿԱՐԿՈՒՄ

«ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 20.05.2020թ-ին ստացված, պարտապան՝ քաղաքացի Բենիամին Սահակյանի սնանկության գործով գնորդ Սարգիս Սերգեյի Դալլաքյանի դիմում- բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով ՝ քաղաքացի Բենիամին Սահակյանի սնանկության գործով կառավարիչ՝Վարդգես Բալաբեկյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, բողոքում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը բացեց նիստը և տեղեկացրեց նիստի մասնակիցներին առ այն,որ սնանկության գործով կառավարչ՝Վարդգես Բալաբեկյանը և դիմումատու քաղաքացի Սարգիս Սերգեյի Դալլաքյանը պատշաճ ծանուցված էին նիստի տեղի և ժամի մասին,բայց անհայտ պատճառներով նիստին չեն ապահովվել իրենց կամ իրենց ներկայացուցիչների ներկայությունը:

Հանձնաժողովի նախագահն հայտնեց նաև որ հեռախոսացանգով կապ է հաստատվել կառավարչի հետ և կառավարիչը տեղեկացրել է,որ դիմումում նշված հարցերի վերաբերյալ իր կատարած աշխատանքներից հետո դիմումատուն պետք է,որ բավարարված լինի և դժգոհություններ չպիտի ունենա:Կապ է հաստատվել նաև դիմումատուի հետ որը հաստատել է կառավարչի գործողությունների և համագործակցության փաստերը և հայտնել է,որ ներկայումս պետական գրանցման հարցերը կատարման փուլում են և վերջնական արդյունքները պարզ կլինեն օրեր անց:Դիմումատուն իր դիմումի վերաբերյալ հայտնել է նաև որ նիստին գալու և ինչ որ բան ավելացնելու չունի,իսկ այն ինչից ինքը դժգոհ էր,կատավարչի կողմից իրականացվել են ամբողջությամբ և այս պահին դիմում նշված փաստերի վերաբերյալ բողոքներ չունի:

Հանձնաժողովի նախագահն խնդրեց ներկաներին հայտնել կարծիք հանձնաժողովի նիստը առանց կառավարչի բացատրությունների և ներկայացված փաստաթղթերի ու առանց դիմումատուի, շարունակելու վերաբերյալ: «ՍԳԿԿ» ԻԿԿ կարգապահական հանձնաժողովի անդամներից՝ Ռ.Խալաթյանը արտահայտվեց,որ արդեն մեկ անգամ նիստը հետաձգվել է համարյա նույնաբովադակ պատճառաբանությամբ և այսօր էլ դիմումատուն ներկա չէ և հաշվի առնելով հեռախոսազանգի միջոցով նրա արտահայտած կարծիքը կարելի է եզրակացնել որ դիմումատուն բավարարված է և նիստին չի մասնակցելու ուստի նիստը կարելի է սկցել առանց դիմումատուի,քննարկել ներկայացված փաստաթղթերը և եթե այդ քննարկումներից հետո կպարզվի որ դա բավարար չի եզրակացության գալու համար,նոր քննարկել նիստը հետաձգելու և այլ հերթի նշանակելու հարցը:

Մյուս հանձնաժողովի անդամները քննարկեցին ստեղծված իրավիճաը և ընդունեցին առաջարկը նիստը սկսել առանաց սնանկության գործով կառավարչի և դիմումատուի, հետո անդրադառնալ եզրակացության գալու հնարավորություններին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 4

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1.«ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 20.05.2020թ-ին ստացված, պարտապան՝ քաղաքացի Բենիամին Սահակյանի սնանկության գործով գնորդ Սարգիս Սերգեյի Դալլաքյանի դիմում- բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով ՝ քաղաքացի Բենիամին Սահակյանի սնանկության գործով կառավարիչ՝Վարդգես Բալաբեկյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, բողոքում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում նշված փաստական հանգամանքների քննության համար 2020թ-ի Հուլիսի 28-ին, ժամը 17:00-ին՝ հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի հետաձգված նիստը սկսել սնանկության գործով կառավարչի և դիմումատուի բացակայությամբ:

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը դիմումը ներկայացնելու համար ձայնի իրավունք տվեց հանձնաժողովի անդամ՝Ա.Մովսիսյանին ով ներկայացրեց դիմում-բողոքների բովադակությունը և գործի փաստական հանգամանքները:

Մասնավորապես դիմումատուն հանդիսանալով նշված վարույթից անշարժ գույքի գնորդ,վճարել է սահմանված գինը և 08.11.209թ-ին կայացած աճուրդով ճանաչվել է հաղթող, իսկ գնված անշարժ գույքը դեռ մինչ այժմ փոխանցված չէ նոր սեփականատիրոջը:Դիմումատուն խնդրել է պարտավորեցնել սնանկության գործով կառավարչին սեղմ ժանկետներում կատարել գույքի առու վաճառքի կնքման գործընթացը:

Հանձնաժողովի անդամները հարցեր ուղղելու հնարավորություն չունենալով,քննարկեցին դիմում նշված փաստական հանգամանքները և տեղեկանալով որ կառավարչի կողմից բացատրություններ կամ փաստաթղթեր չեն ներկայավել և մինչև անգամ կառավարիչը չի ներկայացել անձամբ բացատրություններ կամ պարզաբանումներ տալու համար,որը ինքնին կարգապահական խախտում է,առաջարկեցին «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործկառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի

իրականացման »Կարգի 3.4 կետի հիմքով,նույն կարգի 5.1 մասի հիմքով սնանկության գործով կառավարչին հայտարարել նախազգուշացում ,սահմանելով դիմում նշված փաստերի վերացման ժամկետ:

Հանձնաժողովի մյուս անդամները համակարծիք եղան առաջարկին և քվերկեցին՝

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 4

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1.«ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 20.05.2020թ-ին ստացված, պարտապան՝ քաղաքացի Բենիամին Սահակյանի սնանկության գործով գնորդ Սարգիս Սերգեյի Դալլաքյանի դիմում- բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով ՝ քաղաքացի Բենիամին Սահակյանի սնանկության գործով կառավարիչ՝Վարդգես Բալաբեկյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ, դիմումում նշված փաստական հանգամանքների քննությամբ,Կարգապահական հանձնաժողովի պատշաճ ծանուցումներով կազմակերպված նիստերին չներկայանալու և պահանջված բացատրություններ և նյութեր չներկայացնելու համար սնանկության գործով կառավարչի վարքագծի և նրա գործողությունները օրենքին և կանոնակարգերին համապատասխանության նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի արդյունքներով միջնորդել «ՍԳԿԿ»ԻԿԿ Դիտորդ Խորհրդին՝«Կարգապահական Հանձնաժողովի գործունեության և ՍԳԿ նկատմամբ կարգապահական վարույթի իրականցման» Կարգի 5 հոդվածի 5.1 մասի հիմքով հայտարարել՝

1.1.Սնանկության գործերով կառավարիչ՝Վարդգես Բալաբեկյանին նախազգուշացում և սահմանել՝ դիմում նշված փաստերը վերացնելու 30-օրյա ժամկետ,որից հետո սնանկության գործով կառավարիչը պետք է դիտորդ խորհրդին ներկայացնի վերացման մասին գրավոր տեղեկատվություն և համապատասխան ապացույցներ:

2.Հանձնաժողովի քարտուղարին ապահովել կողմերին պատշաճ ծանուցում, հանձնաժողովի նիստի վայրի և ժամի մասին:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Աղամյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Գևորգյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Սովսիսյան